



# ԱՆՏԱՌԸ ԽՂՂՈՒՄ Է

(ԿԱՐԱԼԷՆԿՕ-Ի)

## I



Նտառը խղղում էր...

Այդ անտառում միշտ այդ խղղ-  
շոցը կար — միապաղաղ, երկար՝  
որպէս հեռաւոր զանգակի արձա-  
գանգ, հանդարտ ու անմեկին՝ որ-  
պէս բառ չունեցող խաղաղ երգ,  
որպէս անցեալի անորոշ լիշատակ:  
Այդ խղղոցը միշտ կար ու կար,

որովհետեւ դա մի հին անտառ էր, որին դեռ արդիւնագոր-  
ծողի կացինն ու սղոցը կպած չէին: Հարիւրաւոր բարձրա-  
բերձ սոճիներն իրենց կարմրագոյն հզօր բներով մտայն  
զօրքի նման կանգնած էին շարեշար և կանաչ կատարները  
վերևում խիտ առ խիտ իրար խառնել: Ներքևում խաղաղ  
էր և խէժի հոտ փչում. սոճու փշերը վարագոյրի նման  
ծածկած էին գետինը, և նրանց արանքից դուրս էին ցցուել  
պայծառ փիլիկները, որոնք իրենց զարմանազան ծոպերն  
արձակած, կանգնած էին անշարժ. ոչ մի տերև չէր  
տատանւում: Խոնաւ անկիւններում դուրս էին եկել եր-  
կար ցողունաւոր արօտներ. սալիտակ առուոյտն իւր

Ճանր գլուխները խոնարհած, կարծես խաղաղ խոնջութեան մէջ էր ընկղմուել: Իսկ վերևում անվերջ ու անընդհատ հնչում էր անտառի խշշոցը, հէնց իմանաս հնաւուրց անտառի հառաչն էր այդ:

Բայց այժմ այդ հառաչներն աւելի ու աւելի խորն էին, զօրեղ: Ես ձի նստած գնում էի անտառի ճանապարհով, և թէպէտ երկինքը չէր երևում, բայց նկատելով, թէ ինչպէս մռայլում էր անտառը, զգում էի, որ թանձր ամպ է բարձրանում վերևը: Ժամանակն ուշ էր: Ծառերի ընթրի միջև տեղ-տեղ դեռ երևում էին արևամտոցի շեղ ընկած ճառագայթները, բայց թաւառաններում արդէն սողոսկում էր միգամած մթնշաղը: Իրիկունս փոթորիկ էր բարձրանալու:

Այսօր որս անելու մտքից պէտք էր բոլորովին ձեռք քաշել. հազիւ ժամանակ կար փոթորիկը չսկսած գիշերուայ օթեանս հասնելու: Զիս սմբակով թրխկոցնում էր մերկացած արմատներին, փնջում էր և անտառային սուր դրմբացող արձագանգը լսելով ականջները խշտացնում: Անտառային ծանօթ ճանապարհով գնալիս նա ինքն էր իւր քայլերն արագացնում:

Շան հաջոց լսուեց: Ցանցառ բների միջից երևում են խրճթի սուաղած պատերը: Ծուխի կապույտ հոսանքը ոլորում է կախ ընկած կանաչի տակ. ծռուած անակը իւր փրչոտ կտուրով ապաստան է գտել կարմիր բների շարքի մօտ. թռում է, թէ նա խրում է գետնի մէջ, մինչ բարձրուղեղ և հպարտ սոճիներն իքենց կատարները բարձրում տատանում են նրա վեպերը: Բացառի մէջ, իրար պինդ կպած, մի խումբ նոր կաղնիներ են բուսած:

Որսորդութեան սովորական ուղեկիցներս, — անտառապահ Զախարն ու Մակսիմը, այստեղ են ապրում: Բայց այժմս, ինչպէս երևում է, սրանք երկուսն էլ

տանը չեն, որովհետև ահապին գամբռ շան հաջոցի վրայ ոչ ոք դուրս չեկաւ: Միայն ծերունի պապը, ճաղատ գլխով ու ալևոր բեխերով, դրան մօտ սաքուի վրայ նստած իւր տրեխն է քրքրում: Պապի բեխերը համարեա թէ մինչև գօտիկն են հասնում, նրա հայեացքն աղօտ է, հէնց գիտենաս պապն ուզում է մի բան մտաբերել, բայց չէ կարողանում:

— Բարի աշողում, պապի: Տանը մարդ կ'այ:

— Եհէ,—պապը շարժում է գլուխը:—Ոչ Զախարն է տանը, ոչ Մակսիմը. Մոտրեան էլ անտառ գնաց կովը փնտրելու...: Կովը չէ երևում,—ով է իմանում, արջերն են լափել...: Հապա... տանը ոչ ոք չկայ:

— Դէ լաւ, վնաս չունի: Կողքիդ կ'նստեմ, կ'սպասեմ:

— Հա՛, սպասիր, սպասիր,—գլխով է անում պապը, և մինչ ես ձիս կաղնու ճիւղին եմ կապում, նա թոյլ, աղօտ հայեացքով ինձ է նայում: Արդէն ծերունի պապի բանը վատ է—աչքը չի զօրում, ձեռքը դողդողում է:

— Դու ո՛վ կ'լինիս, տղայ,—հարցնում է նա, երբ սաքուի վրայ նստայ:

Ամեն եկածիս լսում եմ այս հարցը:

— Հը՛. գիտեմ, գիտեմ, այժմ գիտեմ,—ասում է ծերունին նորից տրեխը ձեռք առնելով:—Ել գլխումս ուշք չի մնացել, ոչինչ միտս չէ մնում: Ովքեր որ վաղուց մեռած են, լիջում եմ,—ճհ, շատ լաւ եմ լիջում: Բայց նորերին մոռանում եմ...: Բանս փտրուկ է:

— Պապի, շատ ժամանակ է, այս անտառում ապրածդ:

— Եհէ, շատ: Փրանցուզը որ թագաւորի երկիրը եկաւ, ես արդէն կայի:

— Ո՛վ գիտէ ինչե՛ր ես տեսել: Պատմելու բաներ կունենաս:

Պապը զարմացած վրաս է նայում:

—Ի՞նչ տեսած պիտի լինիմ, տղայ: Տեսել եմ անտառը...: Խշշում է անտառը, գիշեր-ցերեկ, ամառ թէ ձմեռ խշշում է շարունակ...: Իսկ ես, այն արդ ծառի պէս, անց եմ կացրել տարիքս ու չեմ նկատել...: Արգէն մի ոտս գերեզմանումն է, բայց որ մէկ-մէկ, տղայ, միտք չեմ անում, ինքս էլ չեմ հասկանում, թէ ապրել եմ այս աշխարհում, թէ չէ...: Ա՛յ թէ ինչ: Ո՛վ գիտէ սկի էլ ապրած չլինեմ...:

Մութ ամպի մի ծայրը դուրս եկաւ կատարներէ ետեւից և ընկաւ անտառային բացատի վրայ: Բացատը շրջապատող սոճուտի ճիւղերը քամուց շարժուեցան, և անտառի խշշոցը խոր, զօրացած դաշնակով հնչեց: Պապը գլուխը բարձրացրեց ու ականջ դրաւ:

—Փոթորիկ է բարձրանում,—ասաց նա մի ընկերից:—Ես այդ գիտեմ: Վահ, վահ, գիշերս փոթորիկը պիտի մռնչէ, սոճիները ջարդոտէ, արմատով դուրս շարտէ...: Անտառի տէրը կ'սկսի իւր օլինները...,—աւելացրեց նա ցած ձայնով:

—Այդ սրտեղից գիտես, պապի:

—Ըհը՛. այդ արդէն գիտեմ: Լաւ գիտեմ, թէ ինչպէս ծառը խօսում է...: Ծառն էլ վախ ունի, տղայ...: Այ, բարդին ևս անիծուած ծառ է, շարունակ մի բան է մտմայում.— թէկուզ քամի չլինի. էլի դողդողում է: Սոճին պարզ օրին անտառում երգում է. զնգում, բայց հէնց որ մի թեթեւ քամի բարձրացաւ, կ'սկսի վշտացնել ու տնքալ: Այդ գեռ ոչինչ... Հապա դու մի հիմա ականջ դիր...: Ծիշդ է, աչքս լաւ չի տեսնում, բայց ականջս սուր է՝—կաղնին խշշում է, բացատում արդէն կաղնաթը շարժում է...: Փոթորկի նշան է:

Եւ արդարեւ, բացատի մէջ տեղում բուսած մի խումբ ծուռ ու մուռ կաղնիները, որոնք անտառի

քարձը պատով պաշտպանուած էին, շարժում էին իրենց պինդ ճիւղերն ու մի խուլ խշռոց հանում, որ հեղուկութեամբ սարքերում էր սոճու զիլ զնգոցից:

— ԸՏՐ՝. լսում ես, տղայ,— մանկական-խորամանկ ժպիտով ասում է պապը:— Լաւ գիտեմ,— այսպէս որ կաղնուն գիպաւ, ասել է գիշերս տէրը կգայ, կջարդոտի...: Բայց ո՞նց չէ, կջարդի՛. այդ արդէն նրա ոյժից վեր է... հապա՛:

— Ի՞նչ տէր, պապի: Չէ ինքզ ես ասում, որ փոթորիկն է ջարդում:

Պապը խորամանկ ձևով գլուխը դմբդմբացրեց:

— ԸՏՐ՝. ես այդ լաւ գիտեմ...: Հիմա, ասում են, այնպիսի մարդիկ են դուրս եկել, որ ոչ մէկ բանի էլ չեն հաւատում: Հապա՛: Բայց ես նրան տեսել եմ, ա՛յ ինչպէս որ այժմս քեզ եմ տեսնում, թէ կուզես դեռ աւելի էլ լաւ եմ տեսել, ինչու որ այժմս այճիս զօրքը պակասել է, իսկ այն ժամանակ սուր այճեր ունէի: Հէյ-էյ, և ինչպէս սուր:

— Հապա մի ասա, պապի, ո՞նց ես տեսել նրան:

— Ա՛յ, ո՞նց որ այժմս՝— սկզբում սոճին կ'տնքայ անտառում...: Մէկ կ'զնգայ, մէկ էլ տեսնես կ'սկսի ա-ախ-ախ-ախ...ա-ախ-ախ, ու կ'լռի, իսկ յետոյ նորից, յետոյ նորից, քանի գնայ աւելի պինդ, աւելի խղճալի: Ե՛հէ, նրա համար, որ գիշերս տէրը շատերին է գետին փռելու: Յետոյ կ'սկսի կաղնին, իսկ իրիկնապահին աւելի ու աւելի կ'սաստկանայ, իսկ գիշերը ևս կ'սկսի ոլորել՝— վազում է անտառի մէջ, ծիծաղում ու լաց լինում, պտոյտ-պտոյտ անում, պար գալիս և շարունակ կաղնուն վրայ պրծնում, ուզում է հէնց արմտահան անի...: Ահա մի անգամ աշնանը ես վեր եմ կենում ու պատուհանից դուրս մտիկ տալիս. ա՛յ այդ բանն է, որ նրան գիւր չէ գալիս՝— վազում է պատուհանիս

վրայ և սոճու ճիւղով թր-րանի. քիչ էր մնում սաղ երեսս ջարդէր, գրողը տանի նրան. ես էլ հօ անխելք չեմ— ձեռաց դէն քաշուեցայ: Հապա, տղայ, շատ սրբտոտ է նա....:

— Բայց ինչպիսի կերպարանք ունի, պապի:

— Կերպարանքը, այն ճահճի մօտի հին ճլոււը չկայ, հէնց գիտենաս այդ ճլոււը լինի: Շատ նման է...: Մազը իսկ և իսկ կարմրատերև, այն որ ճառերի վրայ բանում, և մօրուքն էլ՝ էլի այն, իսկ քիթը — ոնց որ մի մեծ ծառի չորացած ճիւղ, գունչն էլ ծուռ ումուռ, հէնց գիտենաս քարաքոսով լինի ծածկուած...: Թ՛ո՛ւ, շատ տգեղ բան է: Աստուած թշնամու չ'տեսցնէ...: Նիշտ եմ ասում, բայց ես մի անգամ էլ եմ տեսել նրան, ճահճի մօտ, շատ մօտիկից: Թէ ուզում ես, ձմեռս արի դու էլ կ'տեսնես նրան: Բարձրացիր, այնտեղ, սարը — այժմ այդ սարը սաղ անտառ է, և բարձրացիր ամենաբարձր ծառի կատարը: Ահա այդտեղից կարելի է նրան երբեմն տեսնել՝ — կ'տեսնես, որ սպիտակ սեան նման կ'գայ անտառի վերևից, ու կ'պտտուի, կ'պտտուի, սարից ձորը կ'իջնի...: Կ'վազէ, կ'վազէ և լետոյ անտառի մէջ էլ կ'անհետանայ: Ըհը'...: Եւ որտեղից որ անցնի, ետևից ձիւնի նման հետք կը թողնի...: Թէ խօսքիս չհաւատաս, մի անգամ ինքդ նայիր, տես:

Մերունու լեզուն բացուել էր: Կարծես անտառի կենդանացած և լուզուած զրոյցն ու օդի մէջ կախ ընկած թուխպը լուզած լինէին հին արիւնը: Պապը գլուխը դարձմբայնում էր, քմծիծաղում, խունացած աչքերը կկոցում:

Բայց կարծես մի ստուեր անցաւ նրա բարձր, կրնճիւներով սկոսած ճակատի վրայով: Նա արմուկով բութեց ինձ և խորհրդաւոր կերպով ասաց.

— Բայց գիտե՛ս, տղայ, ա՛յ քեզ ինչ ասեմ...: Ղորթ է, այդ անտառի տէրը — մի գարշելի արարած է, ասեսու է որ մի քրիստոնեայ մարդ դրա տգեղ կերպարանքը տեսնի...: Դէ, պէտք է ուղիղն ասել՝— նա մարդու վնաս չի տալիս...: ձիշտ է, կ'անի, կատակներ կ'անի մարդու հետ, բայց որ վնաս տայ, այդ չի լինիլ:

— Բաս քնչ էիր, պապի, ասում, թէ ուզում էր ճիւղքով խփի քեզ:

— Եհէ, ուզում էր, հա՛: Բայց չէ այն ժամանակը նեղացած էր, թէ ինչո՞ւ եմ պատուհանից նրան նայում: Ա՛յ թէ ինչու էր ուզում խփի: Թէ որ նրա գործին չխառնուիս, նա էլ ոչինչ վնաս չի տալ քեզ: Այսպէս է անտառի տէրը...: Գիտցիր, որ անտառում մարդկանց ձեռքով աւելի սարսափելի բաներ էին լինում...: Ըհը՛, Աստուած վկայ, զորթ է:

Պապը գլուխը կախ գցեց ու մի բոպէ լուռ մնաց: Յետոյ, երբ վրաս նայեցաւ, նրա հայեացքի մէջ, աղօտ փառի միջից, կարծես լիշողութեան մի կայծ փայլեց:

— Ե՛կ, տղայ, մեր անտառում պատահած մի դէպք պատմեմ քեզ...: Վաղուց է, հէնց այստեղ պատահեցաւ: Երազի պէս... միտքս է գալիս. բայց որ անտառը մի փոքր բարձր չէ խշաղցնում, այն ժամանակ արդէն ամեն բան միտքս է ընկնում...: Ուզո՞ւմ ես, պատմեմ, հը՞:

— Ուզում եմ, ուզում, պապի ջան, պատմիր:

— Դէ պատմեմ ուրեմն, ըհը՛. լսէր:

## II

Իմ հէրս ու մէրս, քեզ ասեմ, վաղուց են մեռել, դեռ փոքր երեխայ էի...: Որբ ու անտէր, մէն մէնակ էի մնացել աշխարքիս վրայ: Այս հալումն էի, ես ըհը՛: Գեղըցիք միտք էին անում, «հիմի քնչ անենք այս երեխին»: Դէ, պանն էլ միտք էր անում իհարկէ...: Այդ

ժամանակ անտառից դալիս է անտառապահ Ռոմանը և ասում է գեղացոյց. «Տուէք այդ երեխան հետս պահ նակ տանեմ, ես կ'պահեմ նրան... Համ անտառում ինձ համար ուրախութիւն կ'լինի, համ էլ նա մի կըտոր հաց կ'ունենայ...», Ահա այսպէս խօսեց նա, իսկ հասարակութիւնը նրան պատասխան տուեց. «վեր առ», նա էլ առաւ, հէնց այդ օրուանից էլ անտառում մնացի:

Այստեղ Ռոմանն ինձ պահեց, պահպանեց: Այլ քեզ սարսփելի մտրդ, Աստուած մի արասցէ...: Բայր մեծ, աչքերը սև, մազերն էլ սև, և հոգին էլ՝ մութ մութ աչքից մտիկ էր տալ իս, նրա համար, որ այդ մարդը իւր ամբողջ կեանքն անտառումն էր անցկացրել. մարդիկ ասում էին՝ արջը ոնց որ նրա եղբայրը լինի, իսկ գայլը հօրեղբօր որդին: Բոլոր գազաններին ճանաչում էր ու չէր վախենում, իսկ մարդկանցից հեռու էր ման գալիս ու երեսներին էլ չէր մտիկ տալիս: Այլ թէ ինչ մարդ էր, — Աստուած վկայ ուղիղ եմ ասում: Որ աչքը վրաս չէր գցում, ջանս փշաքաղ էր լինում...: Բայց էլ լաւ մարդ էր, ինձ կերակրում էր, խօսք չունիմ, լաւ էր կերակրում, — նրա փլաւը միշտ խոզի ճարպով էր եփած լինում, իսկ թէ բազ էլ որսար, բազ էլ կըլինէր: Ինչ որ ուղիղ է՝ ուղիղ է, չէ, ես իմ Աստուածը, լաւ էր պահում...:

Այսպէս երկսով ապրում էինք: Ռոմանն անտառը կ'գնար, իսկ ինձ պահակում կ'փակէր, վրայիցս դուռը կ'կողբէր, չլինի թէ գազանների կեր դառնամ: Իսկ յետոյ նրան պսակեցին Օկսանայի հետ:

Պանը նրան կին տուեց: Կանչում է գիւղ և ասում: է. «գիտես ինչ կայ, Ռոման, արի պսակուիր»: Ռոմանը սկզբում պանին ասում է, «ինչ գլխիս եմ տալիս կինը: Կնկայ հետ թնչ եմ անելու անտառում, առանց այն էլ մի երեխայ ունիմ պահելու: Չեմ ուզում, ասում է,

պսակուելը: Բանն այն է, որ նա սովոր չէր աղջկերանց հետ գործ ունենալ: Թէ ասենք պանն էլ խորամոնկ մարդ էր...: Որ այդ պանը միտս չէ գալիս, տղայ, մըտքովս այն է անցնում, թէ այդպիսիներն էլ չկան, — էլ այդպիսի պաներ չկան, աշխարքեցս վերացել են ...: Հէնց քեզ վեր առնենք. տառն են դու էլ պանի ցեղից ես...: Գուցէ այդ ուղիղ էլ լինի, բայց քո մէջ չկայ այն...: Իսկականը...: Մի խեղճ տղայ ես քեզ համար էլի, ուրիշ ոչինչ:

Բայց նա իսկականը պան էր, առաջուայ պաներից...: Քեզ ասեմ, աշխարքս այնպէս է, որ հարկուոր մարդիկ մէկ մարդուց դողում են, և այն ինչպէս...: Հապա տղայ, դու մի ուրուրին ու վառեկին մտիկ տուր. երկուսն էլ հօ ձուից են դուրս գալիս, բայց ուրուրն իսկոյն վերև է սլանում, էհէ: Հէնց որ օդի մէջ ձայնը ձգեց, ական թօթափել չէ թէ վառեկները — մեծ աքլորներն էլ կ'փախչեն...: Հէնց դրա համար էլ ուրուրը — պանի թռչուն է, իսկ հաւը — գիւղացու...:

Միտքս է, փոքր երեխայ էի՝ գեղացիներն անտառից հաստ գերաններ էին տանում, կարելի է մի երեսուն հոգի լինէին: Իսկ պանը ձի հեծած մենակ գնում է ու բեխերը ոլորում: Ձին տակը խաղում է, պար գալիս, իսկ նա չորս կողմն է նայում: Օ՛ճ. գեղացիները որ պանին չտեսան, վրայ պրծան, իրանց ձիանոց գլուխը դէպի ձիւնը դարձրին, ու իրենք էլ գըլխարկները հանեցին: Իսկ լետոյ ինչ տանջանքով գերանները ձիւնի միջից հանեցին. իսկ պանը ձին չափ ձգած գնում է. — ահա քեզ, տեսնում ես. ճանապարհը մենակ մարդուն էլ նեղ է գալիս: Որ պանը լոնքերը կիտէր գեղացոց ջանը դող կընկնէր, որ ծիծաղէր — ամենքն էլ կուրախանային, իսկ որ մռայլէր — բոլորքեանք կտխրէին: Բայց որ ասես մէկը պանին հակա-

ուսկ պատասխան տար, այդ չտեսնուած բան էր:

Է՛հ, յայտնի բան է, Ռոմանը անտառում մեծացած, մի անտաշ մարդ էր, և պանն էլ նրա վրայ շատ չէր նեղանում:

— Ուզում եմ, — ասում է պանը, — որ դու պսակուես, իսկ թէ ինչո՞ւ — այդ իմ բանն է: Օկսանային առ:

— Ձեմ ուզում, — պատասխանեց Ռոմանը, ես կին չեմ ուզում, թէկուզ հէնց Օկսանան էլ լինի: Թող դուր պսակուի նրա հետ, չէ թէ ես...: Ա՛յ ինչ:

Պանը հրամայեց, որ մտրակը բերեն. Ռոմանին պառկացրին ու պանը նորից հարցնում է նրան.

— Ռոման, պիտի առնե՞ս թէ ոչ:

— Ոչ, — ասում է, — չեմ առնիլ:

— Դէ, տղերք, քանի կարող եք մի լաւ դաղեցէք դրան:

Լաւ դաղեցին: Ռոմանը հօ աժդահարի պէս մի մարդ էր, նա էլ չգիմացաւ:

— Հերիք է, — ասում է, — այսքանս էլ հերիք է Գրողը տեսնէ Օկսանայի երեսը. ինչ եմ մի կնկայ խաթեր այսքան տանջում: Դէ լաւ, կպսակուեմ:

Պանի մօտ կենում էր նրա ուղեկից Օպանաս Շուիդկին: Հէնց այն միջոցին, որ Ռոմանին ստիպում էին պսակուել, վրայ հասաւ դաշտից: Որ իմացաւ Ռոմանի գլխին եկածը, ընկաւ պանի ոտները: Հէնց ուղղակի ոտքերն ընկաւ. համբուրում է...

— Քան թէ, — ասում է, — ողորմած պան, ի զուր մարդուն չարչարէք, լաւ է ես իմ յօժար կամքովս առանց մի խօսքի պսակուեմ Օկսանայի հետ...:

Հապա՛. ինքն էր ուզում Օկսանային առնի: Ա՛յ թէ ինչպիսի մարդ էր, Աստուած վկայ:

Ռոմանս ուրախացաւ, զուարթացաւ: Վեր կայաւ կանգնեց, շարվարը կապեց ու ասում է.

Այլ լաւ եղանակ: Ձէքը կարող մի քիչ վաղ գալ: Հէնց մեր պանն էլ միշտ այսպէս է...: Մի կարգին հարց ու փորձ չի անիլ, չիմանալ, գուցէ մի ուրիշը կամովին կ'ստակուի: Ձէ, կըռնեն մարդու ու տունը որ կտաս: Միթէ սա քրիստոնէք բան է, ասում է: Թ՛ն...:

Էհէ. մէկ-մէկ ժամանակ նա պանին էլ էր տեղը դնում: Այլ ինչ մարդ էր Ռոմանը: Որ բարկանար — էլ մօտ մի գայ, թէ կուզ պանը լինի: Դէ պանն էլ խորամանկ մարդ էր: Բանն այն է, որ նրա միտքն ուրիշ է եղել: Հրամայեց, որ Ռոմանին նորից խոտի վրա պառկացնեն:

— Ես քեզ, լիմար, — ասում է, — ուզում եմ բաղդաւորացնեմ, իսկ դու բաղդիդ քացի ես տալիս: Սա ինչ է քո հալը, այժմս ոնց որ արջը իւր որջում, մենմենակ ապրում ես, սկի մարդ չի էլ ուզում մօտդ գայ...: Դէ, տուէք դրան, այդ լիմարին այնքան, որ ասի՝ հերիք է...: Իսկ դու, Օպանաս, գնա, կորիւր օգքիցս. կտորած գզալի նման ամեն բանի մէջ մի ընկնիլ, թէ չէ տեսնում ես Ռոմանին: Դու էլ նրա օրը կ'ընկնես հա:

Իսկ Ռոմանը սաստիկ բարկացել էր, էհէ: Ինչպէս որ պէտքն էր կարգին դադեցին նրան, որովհետեւ առաջուայ մարդիկը, հասկանում ես, շատ վարպետ էին մտրակով մարդու կաշին հանելու, իսկ նա պառկած ձայն չի հանում, չի ասում՝ հերիք է: Երկար դիմացաւ, բայց վերջն էլ թքեց:

— Մի կինն էլ ինչ է, որ զրա խաթեր մարդու այսքան տան հա տան, այն էլ առանց հաշուի: Հերիք է: Ձեռներդ չորանայ, գւռի ծնունդներ: Ձհասնէիք այսպէս մտրակ գործածելու: Կալ գցած խուրձ խօ չեմ, որ այսպէս թակում էք: Որ այդպէս է, դէ լաւ, ես էլ կ'վերառնեմ ու կ'ստակուեմ...:

Իսկ պանը քթի տակ ծիծաղում է:

—Ա՛յ հիմա ինչ եմ ասում: Թէպէտ այժմ, ասում է, հարսանիքիդ այլ ևս նստել չես կարող, բայց դրա տեղակ լաւ պար կ'գաս...:

Ուրախ մարդ էր մեր պանը, Աստուած վկայ, ուրախ մարդ էր. էհէ: Բայց լետոյ՝ վերջը փիս եղաւ, Աստուած թշնամուս ցոյց չտայ: Ճիշդ եմ ասում, ոչ ոքի չեմ ցանկանալ. թէ կուզ հէնց ջհուդի էլ մի այդպիսի բան չէի ուզել: Ահա ինչ եմ կարծում...:

Ահա այսպէս Ռոմանը պսակուեց: Նա իւր նորատի կնոջը բերեց իւր պահակը. սկզբում շարունակ հայհուլում է նրան, մտրակը շարժում:

—Սկի չարժէիք, որ քեզ համար մարդ այդքան թակուէր:

Անտառից կվերադառնար տուն ու իսկոյն կսկսէր տնիցը դուրս անել նրան.

—Գորիք գնա: Ես իմ պահակիս մէջ կին չեմ ուզում: Իդդ ու թողդ չտեսնեմ: Չեմ սիրում, ասում էր, որ սենեակուս կին լինի քնած: Վատ հոտ է լինում, ասում էր: Ըհը՛:

Իէհ, վերջը ոչինչ, սովորեց: Օկսանան տունը սրբում էր-մաքրում, սիրուն ներկում, ամանները դարստում. ամեն բան այնպէս էր պսպղում, որ մարդու սիրտ էր բացուում: Ռոմանը տեսաւ, որ լաւ կին է, — կամաց-կամաց վարժուեց: Ոչ թէ միայն վարժուեց, հապա մինչև անգամ, տղայ, սիրեց նրան, Աստուած վկայ, սուտ չեմ ասում: Ահա ինչ եկաւ Ռոմանի գլուխը: Կնոջը մի լաւ ճանաչելուց լետոյ ասում էր.

—Ա՛յ շնորհակալ եմ պանից, լաւ բան սովորեցրեց: Իէ մի հարցնող լինի, խելքդ որտեղ էր, որ այդքան ծեծ կերար, մինչդեռ այժմս տեսնում եմ, որ ոչ մի վատ բան չկար այդտեղ: Թէ կուզես, գեռ լաւ էլ է: Ա՛յ բան:

Անցաւ ժամանակ, չեմ իմանում, ինչքան անցաւ։ Օկսանան պառկեց նստարանի վրայ ու սկսաւ տնքալ։ Իրիկնադէմին հիւանդացաւ. իսկ առաւօտեան զարթնեմ տեսնեմ— մէկը բարակ ձայնով մորմոքալի լաց է լինում։ Էհէ, — մտածում եմ ինքս ինձ. — երևում է տղայ է բերել։ Եւ ճիշտ որ այդպէս էլ եղել էր։

Երկար արև չտեսաւ երեխան. հէնց էր, որ առաւօտից մինչև իրիկուն ապրեցաւ միայն։ Երեկոյեան ճրջալուց դադարեց...։ Օկսանան լաց եղաւ, իսկ Ռոմանն ասում է.

— Հիմի էլ երեխան չկայ. որ չկայ, հարկաւոր էլ չէ քահանայ բերելու։ Սոճու տակ կթաղենք։

Ահա այդպէս է ասում Ռոմանը, և ոչ միայն ասում, հապա հէնց այդպէս էլ անում— գերեզման փորեց ու թաղեց։ Ա՛յ, այնտեղ մի կոճղ է ցցուած, կայծակ դիպաւ նրան...։ Հէնց այն սոճին է, որի տակ Ռոմանը երեխան էր թաղել։ Գիտես, տղայ. այսքանս ասեմ, որ մինչև օրս էլ՝ հէնց որ արևը մայր չի մըտնում, և արուսեակը անտառի գլուխը բարձրանում, մի ինչ որ թռչուն թռչում գալիս է ու ձայնը գցում։ Վախ, այնպէս խղճալի խղճալի ճոււղ է, որ սիրտդ կտոր-կտոր է անում։ Դա այն անկնունք մնացած հոգին է — ուզում է, որ իրեն համար խաչ տնկեն։ Ով որ, ասում են, իմաստուն, կարգացող մարդ է, կարող է նրան խաչը տալ, էլ հոգին լետ չի գալ...։ Իսկ մենք այստեղ, անտառում ապրում ենք և ոչինչ չգիտենք։ Նա գալիս է, նա խնդրում է, իսկ մենք միայն ասում ենք. «գնա՛, գնա՛, խղճուկ հոգի, մենք ոչինչ չենք կարող անել»։ Եւ նա լաց է լինում, լաց է լինում ու հեռանում, իսկ լետոյ նորից թռչում-գալիս։ Ա՛խ, տղայ, ափսոս խեղճ հոգին։

Յետոյ որ Օկսանան լաւացաւ, շարունակ գերեզ-

ման էր գնում: Նստում էր գերեզմանի կողքին ու լաց լինում, և այնպիսի ձայնով, որ երբեմն ձայնն ամբողջ անտառն էր բռնում: Նա շատ էր ափսոսում իւր սր-դուն. իսկ Ռոմանը երեխին հօ չէր ափսոսում, հապա Օկսանան էր ափսոսը գալիս: Որ անտառից չգնար, կմօտեճար Օկսանային ու կասէր.

— Հերիք լաս, իմար կին: Բան ես գտել լաց լի-նելու: Մէկ երեխադ մեռաւ, Աստուած կտայ ուրիշը կլինի: Եւ դեռ գուցէ աւելի լաւը կլինի: Նրա համար, որ սա, ո՛վ է իմանում, գուցէ իմօ էլ չէր, ես հօ չեմ իմանում: Իսկ նորը իմօ կլինի:

Ամենեկին Օկսանայի սրտովը չէր, որ նա այսպէս էր խօսում: Լաց լինելուց կդադարէր ու կսկսէր նրան վատ խօսքերով անպատիւ անել: Ե՛հ, Ռոմանը նրա վրայ չէր նեղանում:

— Այդ ինչէր ես դուրս տալիս: Ես ի՛նչ եմ ասել. այս եմ ասում, թէ չգիտեմ: Եւ չգիտեմ այն պատճառով, որ դու առաջ իմը չէիր և անտառում չէիր ապրում, հապա աշխարքում, մարդկանց մէջ: Որտեղի՞ց պիտի գիտնամ: Այժմ դու անտառումն ես ապրում, և շատ էլ լաւ է: Պառաւ Փէօդոսիան էր հօ ասում, երբ նրան կանչելու համար գիւղ էի գնացել. «Այս ի՛նչ շուտ երեխայ հասցրիր, Ռոման: Իսկ ես նրան ասացի. «Ես ի՛նչ գիտեճամ, շուտ է թէ ուշ: Դէ լաւ, դու քու այդ լացդ թո՛ղ, թէ չէ կնեղանամ, ո՛վ գիտի դեռ թա-կեմ էլ:

Օկսանաս կասէր, կասէր ու կհանդարտուէր:

Պատահում էր, որ Օկսանան նրան կհայհոյէր էլ, մէջքին էլ կխփէր, բայց որ սկսէր Ռոմանը նեղանալ, կխաղաղէր, — վախենում էր. կքաղցրանար, կգրկէր, կը համբուրէր ու աչքերի մէջը կնայէր...: Ու Ռոմանը կը հանդարտուէր: Որովհետեւ... գիտես, տղայ...: Դու գուցէ չգիտես, իսկ ես ծեր եմ, թէպէտ պսակուած էլ

չլինեմ, բայց և այնպէս համն առել եմ՝ մանկամարդ կնոջ համբուրը խիստ անուշ է լինում, ինչ նեղացած տղամարդ ուզում է լինի, կարող է սիրտը նստացնել: Օֆ-օֆ... Եւ ես գիտեմ, թէ ինչ բան է կին ասածը: Իսկ Օկոսնան մի այնպիսի գողտրիկ-սիրունիկ կին էր, որ այժմս այդպիսի կանայք որ ասես աչքիս չեն ընկնում: Այժմս, քեզ ասեմ, տղայ, կանայք էլ այն չեն, ինչ որ առաջ:

Մի անգամ անտառում փողի ձայն լսուեց՝—տրատա-տարա-տարա-տա-տա-տա... Սաղ անտառը փողի ձայնովը մէկ էր եղել, հնչում էր ուրախ, բարձր: Ես այն՝ ժամանակ փոքր տղայ էի և չգիտէի, ինչ է. տեսնեմ թուչունները բներից են փախչում, թևերը շարժում, կանչում. մի ուրիշ տեղ նստաստակն ականջները մէջքին հուպ տուած ոտքերին է զօր տալիս, վազում: Ինքս ինչ մտածում եմ՝—երևի դեռ չտեսնուած գազան է այսպէս լաւ կանչում: Բայց գազան չէ եղել, հապա պանը ձին նստած անտառով գալիս է ու փողը փչում. պանի տևից ուղեկից սպասաւորներն ու մարդպետներն են գալիս շան ոհմակը հետներին: Իսկ բոլոր սպասաւորներից գեղեցիկը Օպանաս Եռլետիկն էր, նս, կապուտ արխալուղը հագին ձին խաղացնելով գալիս էր պանի ետևից. նրա գլխարկի կտարը ոսկի էր բանած, ձին տակին խաղում, ոստոստում, հրացանը ուսին պսպղում էր և բանգուրան փոկով վզից կախ ընկել: Պանը սիրում էր Օպանասին, որովհետև Օպանասը լաւ բանգուրա էր ածում և շատ էլ գեղեցիկ երգ ասում: Ա՛հ, ինչ սիրուն երիտասարդ էր այս Օպանասը, շատ սիրուն: Պանը որտե՞ղ, Օպանասը որտե՞ղ. արդէն պանի մագերը թափուել էին, քիթն էլ կարմիր, և թէպէտ աչքերն ուրախ էին, բայց այն չէին, ինչ որ Օպանասինը: Որ Օպանասը վրաս չէր նայում,—ես, մի փոքր

տղայ, իմ էլ ծիծաղոս էր գալիս, իսկ ես հօ աղջիկ չեմ։ Ասում էին, թէ Օպանասի հայրերն ու պապերը Դնեպրի խուժերում ապրող զազախներից են եղել, Սեչում են բնակուելիս եղել. իսկ այնտեղի բնակիչներն ամենքն էլ սոսուն, գեղեցիկ ու ճարպիկ տղամարդիկ են եղել։ Հէնց ինքդ, տղայ, մտածիր՝ ձի հեծած նիզակն ուսիդ տափաստանում սլանալ, կամ կացնով փայտ ջարդել, հօ մէկ բան չէ...

Սենեակից դուրս թռայ, թնջ տեսնեմ՝ պանը մօտ եկաւ ու կանգ առաւ, ուղեկիցներն էլ կանգ առան. Ռոմանը դուրս եկաւ սենեակից, պանի ասպանդակը բռնեց. պանը վեր եկաւ. Ռոմանը նրան գլուխ տուաւ.

— Բարով, — ասում է պանը Ռոմանին, — ո՞նց ես:

— Ի՛հ, — պատասխանում է Ռոմանը, — ես փառք Աստուծոյ, լաւ եմ, թնջ ունիմ լաւ չլինելու. Դ՞նք ոնց էք:

Ռոմանը, գիտե՛ս, պանին պատասխան տալու ձևը չգիտէր: Բոլոր ծառաները ծիծաղեցան, պանն էլ.

— Ի՛հ, փառք Աստուծոյ, որ լաւ ես, — ասում է պանը: — Հապա կ'ի՞նք ուր է:

— Որտե՞ղ պիտի լինի. յայտնի բան է տանն է...

— Ո՛ր այդպէս է, մենք էլ ներս գնանք ուրեմն, — ասում է պանը, իսկ դուք տղերք, գնացէք արօտի վրայ գօրգը փռեցէք ու ամեն բան պատրաստեցէք, որ նորապսակներին այս առաջին անգամը մի լաւ յարգենք:

Եւ ներս մտան—պանը և Օպանասը, և Ռոմանը նրանց ետևից գլխաբաց, մէկ էլ Բողդանը—ծերունի սպասաւորը, պանի հաւատարիմ ծառան: Ահա այժմս այդպիսի ծառաներ էլ չկան աշխարհումս՝—հին մարդ էր, ծառաների հետ խիստ, իսկ պանից առաջ ան, ոնց որ այս շունը: Բողդանը, բացի պանի, ոչ ոք չունէր աշխարհումս: Ասում են, թէ երբ Բողդանի հայրն ու

մայրը մեռնում են, նա պանից ազատութիւն է ուզել և խնդրել, որ պսակուի, իսկ ծեր պանը չէ թող տուել, հասա իւր պանիչի մօտ ծառայ նշանակել՝—ասա քու հայրդ էլ, ասել է, մայրդ էլ, կինդ էլ: Եւ Բողդանն այնուհետև ծառայում է պանիչին, մեծացնում, ձի նստել, հրացան արձակել սովորացնում: Երբ պանիչը մեծացաւ, ինքը պան դարձաւ, ծերուկ Բողդանը շարունակ շան նման նրա ետևից էր ման գալիս: Վախ, քեզ ուղիղն ասեմ՝—շատերի անէծքն է առել այդ Բողդանը, շատերի աչքից արցունք քամեցրել... բոլորը պանի պատճառով: Որ պանը աչքով անէր, գուցէ իւր հարազատ հօրն էլ չխնայէր, կտոր-կտոր սնէր այդ Բողդանը:

Ես էլ, փոքր տղայ էի. նրանց լետևից ներս մըտայ՝—յայտնի բան է, հետաքրքրական էր: Պանը որ կողմը դառնար, ես էլ նրա լետևից էի:

Տեսնեմ պանը սենեակի մէջ տեղը կանգնած, բեխերն է սղալում, ծիծաղում: Ռոմանն էլ գլխարկը ձեռին այդտեղ կանգնած, տրորւում է, փոխ առ փոխ ոտների վրայ շարժւում, իսկ Օպանասը ուսը պատին դէմ արած, կանգնած է խեղճը, ոնց որ այն մատաղ կադնին փիս եղանակին: Թթուել է, տխուր...:

Եւ ասա կրկին էլ դարձան դէպի Օկսանան: Մի այն ծերունի Բողդանն անկեանը նստարանի վրայ նստեց, գլուխը քաշ գցեց. նստած սպասում էր պանի հրամանին: Իսկ Օկսանան վառարանի կողքին անկիւն քաշուած կանգնել էր, աչքը ցած գցած, ու կարմրատակել, ոնց այն խաշխաշի ծաղիկը արտի մէջ: Ախ, երևի գգում էր խեղճը, որ իւր պատճառով մի խաթա էր գալու: Այս էլ ասեմ քեզ, տղայ, իմացիր՝—թէ որ երեք տղամարդ մի կնկայ վրայ աչք ունեցան, այդտեղից լաւ բան չի գուրս գայ—անպատճառ բանը կուուի կ'հասնի, թէ որ

աւելի վատը չլինի: Ես այդ բանը գիտեմ, ինչու որ աչքովս եմ տեսել:

— Հը՛, սնց է, Ռոման, ծիծաղում է պանը, լաւ կին եմ ջուկել քեզ համար:

— Ոչինչ, — պատասխանում է Ռոմանը: — Կին է, էլի՛, վատ չէ:

Այստեղ Օպանասն ուսերը վեր գցեց, աչքը Օկսանային ուղղեց և ինքն իրեն խօսեց. — Հա՛ — ասում է, — կնիկ է: Հէջ չէր սազիլ, որ մի այսպիսի լիմարի բաժին լինէր:

Ռոմանը լսեց այդ խօսքերը, դէպի Օպանասը դարձաւ ու ասում է նրան.

— Ինչո՞վ եմ ես, պան Օպանաս, ձեր աչքում լիմար երևացել:

— Հէնց նրանով, — ասում է Օպանասը, որ կնոջդ պահել, պահպանել չես կարողանում, ա՛յ ինչով ես լիմար...:

Ահա թէ Ռոմանին ինչ խօսքեր ասաց Օպանասը: Մինչև անգամ պանը ոտը գետնին խփեց, Բողդանը գլուխը շարժեց, իսկ Ռոմանը մի ըոպէ միտք արաւ, յետոյ գլուխը վեր բարձրացրեց ու պանին նայեցաւ:

— Ի՞նչ պահպանելու բան կայ, — ասաց նա Օպանասին ու դարձեալ պանին նայում: — Այստեղ գազանից զատ սատանայ անգամ չկայ, ողորմած պանն է միայն, որ հազարից մէկ կ'գայ: Ումնից եմ կնոջս պահպանելու: Տես, շան լակոտ, սիրտս մի հանիր, թէ չէ շատ աչք ու ունքիդ չեմ նայիլ:

Գուցէ բանը թակ ու ծեծի էլ հասնէր, թէ որ պանը չմիջամտէր՝ — ոտքը գետնին խփեց, — և նրանք լռեցին:

— Զայներդ կտրեցէք, — ասում է, — իժի ծնունդներ: Կռուի հօ չե՛նք եկել այստեղ: Հարկաւոր է նորապսակներին շնորհաւորել, իսկ յետոյ, իրիկնապահին, որսի ճահճուտ գնալ: Դէ, եկէք ետևիցս:

Պանը շուռ եկաւ ու տնից դուրսեկաւ, իսկ սպասաւորներն արդէն ծառի տակին ոգեպահիկը պատրաստել էին: Պանի ետևից դուրս գնաց նաև Բողդանը, իսկ Օպանասը գաւթում կանգնացրեց Ռոմանին:

— Ախպէր ջան, չնեղանաս վրաս, — ասում է կաղակը: — Ականջ դիր, թէ ինչ է ասում քեզ Օպանասը՝ — խօ տեսար, թէ ինչպէս պանի ոտներն ընկած, կօշիկներն էր համբուրում, որ Օկսանային ինձ տայ: Էհ, Աստուած քեզ հետ, եղբայր...: Տէրտէրը քեզ պրասակեց, երևի այդպէս էր բաղդը: Հէյ-հէյ, ոչ ոք չի իմանում, թէ ինչ է կատարւում իմ սրտումս...: Աւելի լաւ է, որ Օկսանային ու պանին, երկուսն էլ մէկտեղ գիւլլաթորով անեմ և անկողնի տեղ խոնաւ հողի մէջ պառկացնեմ...:

Ռոմանը նայեցաւ կաղակին և հարցրեց.

— Ա՛յ մարդ, հօ խելքդ չե՞ս թուցրել:

Էլ չլսեցի, թէ գաւթում Օպանասը ցած ձայնով ինչ պատասխան տուեց Ռոմանին, միայն լսեցի, թէ ինչպէս Ռոմանը նրա ուսին թեթևակի խփեց.

— Ախ, Օպանաս, Օպանաս: Ա՛յ ուրեմն ինչպիսի չար ու խորամանկ մարդիկ են եղել աշխարքիս վրայ: Իսկ ես բանից բեխաբար ապրել եմ անտառում ու, որ ասես բան չեմ իմացել: Էհէ, պան, պան, շատ փիս օրի ես հանգիպելու...:

— Դէ, — ասում է Օպանասը, — հիմայ գնայ ու ամենևին չլինի, որ վրայիցդ բան ցոյց տաս, մանաւանդ Բողդանի մօտ: Մի շատ խելօքս էլ դու չես, բայց խորամանկ է այդ պանի շունը: Տես, պանի արաղը շատ չիմես, և եթէ քեզ էլ ծառաների հետ ճահճուտ որսի ուղարկէ, իսկ ինքն ուղէ մնալ, ծառաներին մինչև հին կողնին հասցրու, ցոյց տուր նրանց ճանապարհն ու ինքդ, ասա՛, որ անտառի միջից կարճ ճամբով վերթաս...: Ու շուտով լետ դարձիր, այստեղ արի:

—Բ՛արի, —ասում է Ռոմանը:—Որո՞ի կ'պատրաստուիմ, բայց հրացանս ոչ մանր սաչմով կ'լցնեմ, և ոք թռչուն խփելու խոշոր սաչմով, հապա արջ սպանելու գնդակով:

Նրանք էլ դուրս եկան: Իսկ պանն արդէն գորգի վրայ նստած, հրամայեց արաղի ամանն ու բաժակը բերել, արաղը լցնում է ու Ռոմանին տալիս: Ե՛հէ, շատ լաւն էր պանի ամանն ու բաժակը, բայց արաղն աւելի ևս լաւն էր: Որ մի բաժակ չես խմո՞ւմ, — սիրտդ բացուում է, երկրորդը խմեցիր—սիրտդ կուրծքիդ մէջ սկսում է թռչկոտել, իսկ անոովոր մարդը ևս երրորդ բաժակից արդէն նստարանի տակը կ'զլորուի՝ եթէ միայն կի՞նը նրան նստարանի վրայ չպառկացնի:

Ե՛հէ, ասում եմ քեզ, խորամանկ մարդ էր պանը: Ուզում էր իւր արաղով Ռոմանին քոռ հարբացնի. բայց դեռ արաղ չէ եղել, որ Ռոմանին հարբացնել կարողանար: Վեր է առնում պանի ձեռքից բաժակը ու խմում, խմում է նաև երկրորդը. երրորդն էլ խմեց, միայն աչքերն այնպէս են փայլում, ո՞նց որ գայլի աչքեր, ու մէկ էլ սև բեխերն է շարժում: Մինչև անգամ նեղացաւ պանը:

—Մի սրան նայեցէք, ո՞նց է կոնծում շան տղան, սկի ասես վրիցը երևո՞ւմ է: Ուրիշը վաղուց էր սկսեք լաց լինել, իսկ դուք, մարդիկ, տեսէք, դեռ ծիծաղում է...:

Պանը լաւ գիտէր, որ մի անգամ որ մարդ արաղից սկսաւ լաց լինել, այնուհետև շատ չէր քաշիւ, աչքերը իրենք իրենց կ'փակուէին: Բայց այս անգամ իւր առջևինը այգպիտի մարդ չէր:

—Ի՞նչ ունիմ լաց լինելու, — պատասխանում է Ռոմանը:—Մինչև անգամ այդ սկի չէր էլ սազ գալ: Ուրո՞մած պանն ինձ շնորհաւորութեան է եկել, իսկ ես պի-

տի նստեմ ու կնիկարմատի պէս լաց լինիմ: Փառք Աստուծոյ, դեռ որ լաց լինելու բան չունիմ, թող թշնամիներս լան....:

— Ասել է որ, — հարցնում է պանը, — զո՞հ ես:

— Էհէ, ինչո՞ւ չպէտք է զոհ լինիմ:

— Բայց միտքդ է ինչպէս մտրակով պսակեցինք քեզ:

— Ինչպէս միտքս չլինի: Որ ասում եմ, թէ խելք չունէի՛ր, չէի հասկանում, թէ ինչն է քաղցր, ինչը՝ դառն: Մտրակը դառն է, բայց էլի կնկանից աւելի էի սիրում նրան: Ա՛յ շնորհակալ եմ քեզանից, ողորմած պան, նոր ինձ, լիմարիս մեղր ուտել սովորեցրիք:

— Լա՛ւ, լաւ, ասում է նրան պանը: — Դրա փոխարէն դու էլ ինձ ծառայութիւն արա՛ — ա՛յ ծառաներիս հետ կ'երթաս ճահճուտ, որքան կարելի է շատ թռչուն կ'որսաս, և անպատճառ խուլ փայտորիկ կ'բերես:

— Ե՞րբ է ուզում պանը, որ ճահճուտ երթանք:

— Ա՛յ, մէկ էլ խմենք, Օպանասն էլ մեզ մի երգ փ'ասէ, ու Տէր ընդ քեզ:

Ռոմանը նայեցաւ նրան ու ասում է.

— Այդ դժուար բան է՝ — ժամանակն ուշ է, ճահճուտը հեռու, դրանից զատ քամին էլ անտառում խըշշացնում է, գիշերս փոթորիկ է լինելու: Ինչպէս ենք այժմս մի այդպիսի զգոյշ թռչուն որսալու:

Իսկ պանն արդէն հարբել էր, իսկ հարբած ժամանակ սաստիկ բարկացկոտ էր լինում: Լսեց, թէ ինչպէս ծառաներն սկսան իրար մէջ փսփսալ, ասում են, թէ Ռոմանն ուղիղ է ասում, շուտով փոթորիկ պիտի բարձրանայ, — և նեղացաւ: Բաժակը թրխկացրեց, աչքերը ուրեց՝ — բոլորեքեանք լռեցին:

Մենակ Օպանասը չվախեցաւ. պանի հրամանով վեր առաւ բանդուրան, առաջ անցաւ, սկսաւ բանդուրան լարել, և կողքից պանին նայեցաւ ու ասաց.

—Խելքի արի, ողորմած պան: Որտեղ է տեսնուած, որ գիշերով, այն էլ փոթորկի ժամանակ, մարդկանց թռչուն որսալու համար անտառ ուղարկեն:

Ահա թէ ինչքան համարձակ մարդ էր Օպանասը: Միւսները, ինչ ասել կուզի, պանի ճորտերը, վախենում են, բայց նա—ազատ մարդ էր, կազակի ցեղից: Նրան մի ծեր կազակ-բանդուրիստ փոքր հասակում բերել էր Ումանից: Այնտեղ, տղայ, Ումանում, ժողովուրդը ինչ որ ղալմաղալ էր սարքել: Ահա այդ ժամանակ ծեր կազակի աչքերը հանել էին, ականջները կտրել ու բաց թողել: Դրանից լետոյ քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ ման գալով, եկել ընկել էր մեր կողմերը, մանուկ Օպանասն էլ հետը: Ծեր պանը նրան վերցրեց իւր մօտ, որովհետև լաւ երգեր սիրող էր: Ծերունին մեռաւ— Օպանասն էլ մնաց ապարանքում ու այնտեղ էլ մեծացաւ: Նոր պանն էլ սիրում էր նրան և երբեմն այնպիսի խօսքեր էր լսում նրանից ու ձայն չէր հանում, որ եթէ ուրիշը լինէր, կաշին կառնէին:

Այդպէս էլ այժմս. սկզբում պանը բարկացաւ, կարծում էին Օպանասին կիսփէ, բայց լետոյ տտում է նրան.

—Ո՛վ Օպանաս, Օպանաս: Խելօք մարդ ես, բայց գեռ այսքանս չես հասկացել, որ չպէտք է քիթդ դրան արանքում թողնես, որ չլինի թէ ճգմուխ:

Ահա ինչ հանելուկ ասաց կազակին: Բայց կազակախօյն և եթ գլխի ընկաւ: Եւ կազակը երգով պատասխան տուեց պանին: Ախ, երնէկ պանն էլ նրա երգը հասկանար, ով գիտէ, գուցէ թէ այն ժամանակ նրա կինը դառն արցունք չթափէր նրա վրայ:

—Պան, շնորհակալ եմ խրատիդ համար, —ասաց Օպանասը:—Ահա դրա համար ես էլ մի երգ կ'երգեմ, իսկ դու լսիր:

Եւ խփեց իւր բանդուրայի լարերին:

Յետոյ բարձրացրեց գլուխը, երկինք նայեցաւ, թէ ինչպէս երկնքի երեսին արծիւն էր պտտուում, ինչպէս քամին մուժ ամպերը հալածում: Ականջ դրեց, թէ ինչպէս սոճիներն էին խշշացնում...:

Եւ նորից բանդուրայի լարերին խփեց:

Է՛հ, տղայ, դու Օպանաս Եվիզիուն չհասար, նրա ածածը չես լսել, իսկ այսուհետեւ չես էլ կարող լսել: Բանդուրան հօ մի նշանաւոր գործիք չէ, բայց մի տեսնես, թէ հմուտ մարդու ձեռների մէջ ինչպէս է երգում: Հերիք էր լարերի վրայով մատները մի անց կացնէր, բանդուրան արգէն ամեն բան կասէր նրան՝—թէ ինչպէս մուժ անտառը վատ եղանակին խշշացնում է, և ինչպէս քամին դատարկ տափաստանում զնգում է մուխտութի մէջ, և ինչպէս կազակի բարձր շիրմի վրայ չոր խոտն է շշնջում:

Ձէ, տղայ, էլ իսկական խաղ ու տաղ չէք լսիլ դուք: Այժմ էլ են այս կողմերը ամեն տեսակ մարդիկ գալիս, այնպիսիները, որ լոկ Պոլսուիէյում չեն եղել, հայպա և ուրիշ տեղեր, և ամբողջ Ուկրայնայում—և Չիգիրինում, և Պոլտաւայում, և Կիււում, և Չերկասում: Ասում են այլ ևս բանդուրիստներ չկան, էլ տօնավաճառանոցներում ու վաճառանոցներում չեն լրսուում դրսնք: Ներսը դեռ պատից կախած է իմ հին բանդուրաս: Ինձ աճել Օպանասը սովորեցրեց, իսկ ինձանից ոչ ոք չսովորեց: Որ մեռնեմ,—այդ հեռու չէ,—ով գիտի աշխարհիս երեսին էլ բանդուրայի ձայն չը լսուի: Ա՛յ ինչ:

Եւ Օպանասը ցած ձայնով մի երգ երգեց: Օպանասը բարձր ձայն չուներ, բայց տխուր էր նրա ձայնը, հէնց գիտենաս հոգուդ տունն էր մտնում: Իսկ այդ երգը, տղայ, կազակը ինքն էր պանի համար հա-

նել, էլ միւս տնգամ չլսեցի ես այդ երգը, և երբ վերջը, երբեմն, կիսնդրէի, որ Օպանասը մէկ էլ ասի, միշտ կհրատարուէր:

—Ում համար որ,—ասում էր,—այդ երգը երգուել է, նա էլ տշխարհումս չկայ: Կազակն այդ երգով պանին ամեն բան տոաց, թէ ինչ էր պանի գըլխին գալու, և պանը լաց էր լինում, մինչև անգամ արցունքը բեխերի վրայից ցած էր գլորում, բայց էլի, ինչպէս երևում է, երգից ոչինչ չհասկացաւ:

Վախ, միտս չէ երգը, մի կտորն է միայն միտքս մնացել: Կազակը պան Իվանի մասին էր երգում.

Ով իմ պան, ով Իվանէ...

Խելօք պանն շատ բան գիտէ...

Գիտէ որ ուրուրն երկնքում

Սաւառնում է, ագռաւ ջարդում...

Ով իմ պան, ով Իվանէ...

Բայց պանըն այս չըգիտէ,

Թէ ինչպէս այս աշխարքում

Եւ ագռաւը իւր գրան

Ուրուրին էլ է յաղթում...

Հէյ, աղայ, հէնց գիտենաս դեռ այժմս էլ այդ երգը ականջիս մէջն է, մարդիկն էլ աչքիս առաջն են՝ —կանգնած է կազակը բանդուրան ձեռին, պանը նըստած է գորգի վրայ, գլուխը կախ գցել ու լաց լինում. ծառաները չորս կողմը բոլորած, արմուկներով իրար են հրհրում. ծերունի Բողդանը գլուխն է շարժում...: Իսկ անտառն, ինչպէս այժմս, խշշում է, և բանդուրան խաղաղ ու սրտագին հնչում, իսկ կազակը երգում է, թէ ինչպէս պանի կինը լաց է լինում պան Իվանի վրայ:

Պաննին լալիս է, լալիս

Իսկ պան Իվանի վրան

Սև ագռաւն է շուռ գալիս:

Վա՛րս, պանը չհասկացաւ երգի միտքը, սրբեց ար-  
ցունքն ու ասաց.

— Դէ, պատրաստուիր, Ռոման: Տղերք, ձիանդ նըս-  
տէք: Դու էլ, Օպանաս, հետները գնա—հերիք երգերդ  
լսեցի...: Լաւ երգ է, միայն թէ ինչ որ նրա մէջ ա-  
սուած է, այս աշխարհումս չէ պատահում:

Իսկ կազակի սիրտը երգից մեղմացել էր, աչքերը  
արտասուակալել:

— Ա՛հ, պան, պան.—ասում է Օպանասը,—մեր  
ծերերն ասում են՝—հեքիաթի մէջ էլ ճշմարտութիւն  
կայ, երգի մէջն էլ ճշմարտութիւն կայ: Միայն հեքիա-  
թի մէջի ճշմարտութիւնը նման է երկաթի՝—երկրիս  
վրայ երկա՛ր ձեռքէ ձեռք անցնելուց կժանգոտի...: Իսկ  
երգի մէջի ճշմարտութիւնը ոնց որ օսկի—ո՛ր ասես չի  
ժանգոտի...: Այսպէս են ասում մեր ծերերը:

Պանը ձեռքը թափ տուեց:

— Է՛հ, գուցէ ձեր կողմերում այդպէս է, իսկ մե-  
զանում այդպէս չէ...: Գնա, գնա Օպանաս,—բեզարել  
եմ քեզ լսելուց:

Կազակը մի րօպէ կանգ առաւ ու լետոյ լանկարծ  
երեսի վրայ պանի առաջ գետին ընկաւ.

— Պան, խօսքս մտիկ արա: Նստիր ձիդ ու տուն  
գնա,—սիրտս ասում է, որ փիս բան է լինելու:

Այստեղ սլանս բարկացաւ, կազակին շան նման  
ոտով խփեց:

— Կորիւր աչքիցս: Երևում է, որ կնիկարմատ ես  
դու և ոչ կազակ: Կորիւր առաջիցս, թէ չէ վատ կը լի-  
նի...: Իսկ դ՞ուք ինչ էք կանգնել, ի՞ժի ծնունդներ:  
Մի՞թէ այլ ևս ձեր պանը չե՛մ ես: Մի այնպիսի բան  
կանեմ ձեր գլխին, որ ձեր պապերն էլ իմ պապերից  
տեսած չլինին...:

Օպանասը ոտի կանգնեցաւ, ոնց որ մու՛թ ամպ,

Ռոմանի երեսին մտիկ տուաւ: Իսկ Ռոմանը հրացանէն լենած, կանգնել է մի կողմ քաշուած, հէնց իմանաս ոչինչ չի եղել:

Կազակը բանդուրան խփեց ծառին — բանդուրան փշոր-փշոր եղաւ, միայն անտառի մէջ բանդուրայի հառաչը վեր ելաւ:

— Թող սատանաները միւս աշխարհում խելք խրատան այնպիսի մարդու, որ խելօք խորհուրդ չէ ուզում լսել... Պան, տեսնում եմ, որ քեզ հաւատարիմ ծառայ հարկաւոր չէ:

Դեռ պանը պատասխան չէր տուել, որ Օպանասը թռաւ իւր ձիու վրայ ու քշեց: Ծառաները նոյնսլէս ձիանը նստան: Ռոմանը հրացանը ուսը ձգեց ու առաջ անցաւ, միայն պահակի մօտից անցնելիս Օկսանային ասաց.

— Օկսանա, երեխին պառկացրու: Ժամանակ է քնելու: Պանի համար էլ անկողին գցիր:

Ու շուտով բոլորն էլ այն ճանապարհով անտառ գնացին. իսկ պանը ներս մտաւ, միայն պանի ձին էր ծառի տակ կապած մնացել: Մուլթը կոխել էր, անտառը խշշում էր և անձրևը կաթկաթում, հէնց ուղիդ այնպէս, ինչպէս որ այժմս է... Օկսանան խոտնոցում պառկացրեց ինձ, վրաս խաչակնքեց... Եւ լսեմ, որ Օկսանաս լաց է լինում:

ՕՖ, այն ժամանակը ես փոքր երեխայ էի ու չէի հասկանում, թէ շուրջս ինչ է լինում: Խոտի վրայ կուչ եկայ, ականջ դրի, թէ ինչպէս քամին անտառում տաղ էր ասում, ու սկսայ քնի գնալ:

Ըհը՛, լանկարծ լսում եմ, ու մէկը ման է գալիս պահակի մօտ... Ծառին մօտեցաւ, պանի ձին արձակեց: Ձին խրխնջաց, սմբակը դրմբացրեց, վազեց դէպի անտառ և շուտով նրա արոփն էլ լռեց... Յետոյ, լսում

եմ դարձեալ, որ մէկը ճանապարհով ձին չափ է ձգել, այս անգամ արդէն դէպի պահակն է դալիս: Բոլորովին մօտ եկաւ, թամբից վայր թռաւ ու շիտակ պատուհանին մօտեցաւ.

— Պան, պան,— կանչում է ծեր Բողդանի ձայնը: — Ախ, պան, շուտ բաց արա: Երևում է անիծեալ կազակը վատ միտք ունի— ձիդ անտառ բաց թողեց:

Իե՞ր ծերունու խօսքը բերանն էր, մէկը նրան ետևից պինդ բռնեց: Ես վախեցայ, լսեմ— թրխի, մէկ բան գետին ընկաւ...:

Պանը բաց արաւ դուռը, հրացանը ձեռքին դուրս պլծաւ, բայց արդէն գաւթում Ռոմանը բռնեց նրան, մագբըրը ձեռքն առաւ ու խփեց գետին...:

Տեսնում է պանը, որ բանը բուրդ է, ու ասում է.

— Վա՛յ, բաց թող, Ռոմասի՛րս: Ա՛յս է լաւութեանս փոխարէնը:

Իսկ Ռոմանը նրան պատասխանում է.

— Ձեմ մոռացել, չեմ, անիծուած պան, թէ ինձ և թէ կնոջս արած լաւութիւնդ: Ա՛յ, հէնց լաւութեանդ փոխարէն եմ հատուցանում այժմս...:

Իսկ պանը նորից ասում է.

— Օպանաս, հաւատարիմ ծառաս, դ՛ու հասիր: Չէ՛ հարազատ որդու նման սիրում էի քեզ:

Իսկ Օպանասը պատասխանում է.

— Ի՞նչ հաւատարիմ ծառայիդ շան նման փախուելի: Ի՞նչ ինձ այնպէս էիր սիրում, ոնց որ փայտը՝ մէջքն է սիրում, իսկ այժմս այնպէս ես սիրում, ոնց որ մէջքը փայտին...: Ես հօ քեզ խնդրում էի, աղաչում, — դու ականջ չարիր...:

Եւ պանը սկսաւ Օկսանային աղաչել.

— Գոնէ՛ դ՛ու պաշտպանիր, Օկսանա, բարի սիրտ ունիս դու:

Վազեց դուրս եկաւ Օկսանան, ձեռներն իրար խփեց.

— Ինչքան խնդրեցի քեզ պան, ոտքերդ ընկայ, թէ խնայիր կուսութեանս, թէ այժմս էլ մի խայտառակիլ ինձ, արամբի եմ: Ի՞նչ չխնայեցիր, իսկ այժմս ինքդ ես աղաչում... Վա՛յ, վա՛յ գլխուս, քնչ պիտի անեմ:

— Թողէք, — կանչում է դարձեալ պանը, — իմ պատ-  
ճառովս բոլորդ էլ Սիրբերում կփտէք...

— Մեր գարդը մի քաջիլ, պան, — ասում է Օպա-  
նասը. — Ռոմանը քու ծառաներից առաջ կլինի ճահ-  
ճուտում, իսկ ես, քո շնորհիւ, մէն-մէնակ եմ աշխար-  
հիս երեսին. ես իմ գլխիս ճարը կը տեսնեմ: Հրացանն  
ուսս կգցեմ ու կընկնեմ անտառները...: Մի քանի կըտ-  
րիճ աղայք կհաւաքեմ գլխիս ու կսկսենք մեր գործը...:  
Գիշերներն անտառից դուրս կգանք մեծ ճանապարհ,  
իսկ գիւղ մտնելիս էլ, ուղղակի պաների պալառը կը  
գնանք: Դէ, Ռոման, վերցրու, պանին դուրս, անձրևի  
հանենք:

Ընդդիմացաւ պանը, գոռաց, գորգոռաց, իսկ Ռո-  
մանը քթի տակ փնթփնթում է միայն, իսկ կազակը  
ծիծաղում: Եւ գուրս եկան:

Իսկ ես վախեցայ, ներս վազեցի, ուղղակի Օկսա-  
նայի գիրկն ընկայ: Օկսանան նստած էր նստարանի  
վրայ — երեսը սպիտակ, ոնց որ պատ...:

Իսկ անտառում արդէն կատարեալ փոթորիկ էր  
բարձրացել, — անտառը տեսակ տեսակ ձայներ էր հա-  
նում, իսկ քամին կոնձկոնձում էր, իսկ երբեմն-երբեմն  
էլ ամպն էր գոռում: Նստած ենք այսպէս Օկսանայի  
հետ, և յանկարծ լսում եմ, անտառում մէկը հառա-  
չեց: Վա՛յ, և այնպէս վշտալի կերպով հառաչեց, որ  
հէնց այժմս էլ որ միտս չէ գալի՛ս, սիրտս կտոր կտոր  
է լինում, մինչգեռ քանի՛ սարի է անցել արդէն...:

— Օկսանա, — ասում եմ, — հոգի ջան, այդ ո՞վ է  
անտառում տնքում:

Իսկ նա ինձ գիրկն առաւ ու օրօրում է.

— Քնիր, — ասում է, — զաւակս, ոչինչ չկայ: Դա  
այնպէս... անտառն է խշշում...:

Եւ անտառն իսկ որ խշշում էր, — սխ, և ինչպէս  
էր խշշում:

Մի քանի ժամանակ էլ նստած էինք այսպէս, մէկ  
էլ լսեմ — անտառում կարծես հրացան տրաքեց:

— Օկսանա, — ասում եմ, — հոգի ջան, այն ո՞վ է  
հրացան արձակում:

Իսկ նա, խեղճը, շարունակ օրօրում է ինձ և միշտ ասում.

— Լռիր, լռիր, զաւակս, այդ Աստուծո՛ւ կրակն է անտառում տրաքում:

Իսկ ինքը շարունակ լաց է լինում և ինձ իւր կրծքին պինդ հուպ տալիս, օրօրում. «Անտառն է խըշշում, տղաս, անտառն է խըշշում...»:

Այսպէս նրա գրկում պառկած էլ քնել էի...:

Միւս օրը, տղայ, դուրս վազեմ, տեսնեմ արևը դուրս է եկել, Օկսանան շորերը հագին քնած է մենակ: Երեկուանը միտքս եկաւ ու մտածում եմ՝— երևի երազ էր:

Բայց երազ չէր, — ահ, չէ, երազ չէր, — իսկը եղած բան էր: Գուրս եկայ խրճթից, վազեցի անտառ, իսկ անտառում թռչուններն են ճուռողում ու ցողը տերևների վրայ պսպղին է տալիս: Ահա հասայ թփերի մօտը, իսկ այդտեղ թէ պանը և թէ հաւատարիմ ծառան պառկած են կողք կողքի: Պանը խաղաղ էր ու դժգոյն, իսկ ծառան ալևոր, ոնց որ աղանի, ու խոժռած, հէնց գիտենաս կենդանի լինէր: Թէ պանի և թէ ծառայի կրծքին արիւն կար:

Իսկ քնչ եղան միւսները, — հարցրի ես տեսնելով, որ պապը գլուխը քաշ գցեց ու լռեց:

— Ըհը՛. ինչպէս որ Օպանասն ասել էր, այնպէս էլ եղաւ: Եւ նա երկար ժամանակ ապրում էր անտառում, կտրիճների հետ մեծ ճանապարհը դուրս գալիս, պաների ապարանքներն այցելում: Նրա ճակատի գիրն էլ այդ էր. — հայրերը աւազակութիւն էին արել (հայդամակ), իրեն էլ նոյնը վիճակուեց: Շատ անգամ նա գալիս էր ահա այս տնակը, մեզ մօտ, բայց աւելի Ռոմանը տանը չեղած ժամանակ: Կգար, կնստէր, երգ կասէր և բանդուրա կածէր: Գալիս էր նաև ուրիշ ընկերների հետ՝— Օկսանան ու Ռոմանը միշտ կընդունէին նրան: Է՛հ, որ քեզ ճիշդն ասեմ, տղայ, այդտեղ էլ բանն առանց մեղքի չէր: Այ շուտով Մակսիմն ու Զախարը կգան անտառից, — մի լաւ մտիկ տուր նրանց՝—

Կս իրենց ոչինչ չեմ ասում, միայն ով որ ճանաչում էր Ռոմանին ու Սպանասին, իսկոյն նրա աչքին կընկնի, թէ ո՞րը որին է նմանում, թէպէտ և սրանք այն մարդկանց որդիքը չեն, այլ թոռները...: Այ ինչ բաներ եմ տեսել, աղա՛յ, այս անտառում ապրելով...:

Բայց ինչպէ՞ս խշշում է անտառը, — փոթորիկ պիտի լինի...:

## III

Ծերուկին պատմութեան վերջին խօսքերը շատ տարտամ կերպով էր արտասանում: Պարզ էր, որ նրա գրգիռն անցել էր և այժմ լոգնել — լեզուն կապւում էր, գլուխը գողգողում, աչքերն արտասուակալում:

Երեկոն վրայ էր հասել, անտառը մթնել. տնակի չորս բոլորքը անտառն այլեկոծւում էր զերթ այլեկոծուած ծով. սև սաղարթները տատանւում էին, ինչպէս ալիքների կատարները մրկայույզ եղանակին:

Ենրի ուրախ հաջոցից իմացանք, որ տէրերն եկան: Երկու անտառապահներն էլ շտապով մօտեցան պահակին, իսկ նրանց լետեից հեալով Մօտրեան քշում, կորած կովն էր բերում: Մեր բոլոր խումբն էլ այդտեղ էր:

Մի քանի ըրպէ անցած արդէն մենք ներսն էինք նստած. կրակը ուրախ ճարճատում էր վառարանի մէջ: Մօտրեան ընթրիք էր պատրաստում:

Թէպէտ առաջ էլ շատ անգամ էի տեսել Զախարին ու Մակսիմին, բայց այժմ մի առանձին ուշադրութեամբ դիտեցի նրանց: Զախարի դէմքը մուծն էր, ողորկ, ցածլիկ ճակատի ներքևում յոնքերն իրար էին միացած, հայեացքը մուսլ էր, թէև դէմքի վրայ արտայայտւում էր նրա բնատուր բարեսրտութիւնը, որ լստուկ է ոլթին: Մակսիմի դէմքը բաց էր, աչքերը մոխրագուն, փաղաքուշ. ժամանակ առ ժամանակ նա թոթւում էր իւր գանգուր մազերը և նրա ծիծաղը հնչուն էր ու մի տեսակ վարակիչ:

— Հը՛, ծերուկին մեր պապերի պատմութիւնը չաքեց ձեզ, — հարցրեց Մակսիմը:

— Այո, պատմեց, — պատասխանեցի ես:

— Ի՛նչ նա միշտ այդպէս է: Հէնց որ անտառը ըս-

կրսի բարձր խշշալ, իսկոյն հին բաներն է միտքը ընկնում: Հիմա սաղ գիշերս աչքը չպիտի փակի:

— Բոլորովին երեխայ է դարձել, — աւելացրեց Մօսրեան ծերունու համար շէի ածելով:

Կարծես ծերունին չէր էլ հասկանում, թէ խօսքը հէնց իւր մասին է: Նա բոլորովին ճլորել էր, ժամանակ առ ժամանակ անհիմատաբար ժպտում, գլուխը շարժում, միայն երբ անտառում շառաչող քամին ուժգնութեամբ դրսից յորձանք էր տալիս տնակի վրայ, նա սկսում էր անհանգստանալ, և վախժխելով, մի բանի ունկն դրած ականջ սրում:

Շուտով անտառային պահակուժ ամեն բան լռեց: Ծրագը թոյլ կերպով լուսաւորում էր և մէկ էլ ճպուռն էր իւր միտտեսակ, ճչուն երգը երգում...: Իսկ անտառում կարծես հազարաւոր ձայներ, թէպէտ խուլ կերպով, մի բանի մասին միմեանց սպառնազին ձայն արձակած ժխոր էին հանում: Այնպէս էր թւում, թէ այնտեղ, մթնում մի ահեղ զօրութիւն աղմկալի խորհուրդ է կազմում այս խեղճ, անտառի մէջ կորած խրճ-թի վրայ ամեն կողմից յարձակում գործելու համար: Երբեմն-երբեմն անորոշ դղորդն աւելանում էր, զօրանում, աճում, և այն ժամանակ դուռն սկսում է զոդ-դողալ, հէնց գիտենաս մէկը ցասմամբ Ֆշշացնելով դրսից վրայ է ընկել դրանը, կրնկահան է ուզում անել, իսկ ծխնելոյզի մէջ գիշերային մրրիկը խղճալի սպառնալիքով սրտակտուր եղանակ է նուագում: Յետոյ մի առ ժամանակ փոթորկի ուժգնութիւններն իջնում էին, օրհասական խաղաղութիւնը թալկահար ճնշում սիրտդ, մինչև որ նորից լսում էր թնդիւնը՝ հէնց գիտենաս հնաւուրց սոճիները պայման էին կապել յանկարծ տեղներինցը դուրս պրծնել ու գիշերային փոթորկի բաղխումների հետ թռչել, մի անյայտ տարածութիւն գնալ:

Ես անմեկին նիրհով մի առ վայրկեան մոռացութեան մէջ էի ընկել, բայց, կարծեմ, երկար չէր քաշել այդ: Փոթորիկն անտառում զանազան ձայներ ու եղանակներ էր արձակում: Ժամանակ առ ժամանակ ճրագը առկայծում էր և խրճիթը լուսաւորում: Ծերու-

նին իւր նստարանի վրայ նստած ձեռքով իւր չորս-  
կողմը մի բան էր փնտրում, կարծես յոյս ունէր մէկին  
գտնել: Վախի և համարեա մանկական անօգնականու-  
թեան արտայայտութիւն էր երևում խեղճ պապի երեսին:  
— Օկսանա, հոգի-ջան, — լսեցի ես նրա խղճալի  
տրտունջը, — այն ո՞վ է անտառում հառաչում:

Նա յուզուած կերպով շօշափեց ձեռքով չորս բո-  
լորքն և ականջ կախեց:

— Եհէ, — խօսեց նա կրկին, — ոչ ոք չէ հառաչում:  
Այդ քամին է անտառում խշշացնում...: Ուրիշ ոչինչ,  
անտառը խշշում է հա՛ խշշում...:

Մի քանի րոպէ էլ անցաւ: Փայլակի կապտաւուն  
կրակը շարունակ ներս էր նայում մանր պտտուհան-  
ներից, դուրսը բարձր ծառերը բոցակալում էին ու-  
րուականի ձև ստացած և նորից կորչում խաւարի մէջ,  
փոթորկի ցասկոտ կռիւնջի միջև: Բայց ահա աչք ծակող  
լոյսը մի առ վայրկեան ծածկեց ճրագի թոյլ բոցը և  
անտառի մէջ գղրդաց կայծակի բեկբեկ, մօտակալ հա-  
րուածք:

Ծերունին դարձեալ վրդովուած՝ նստարանի վրայ  
դէս ու դէն ընկաւ:

— Օկսանա, հոգի ջան, — այն ո՞վ է անտառում  
հրացոն պարպում:

— Գնիր, քնիր ծերուկ, — վառարանի վերևից լսուեց  
Մօտրեայի հանդարտ ձայնը: — Ա՛յ, միշտ այսպէս է—  
գիշերները փոթորկի ժամանակը միշտ Օկսանային կան-  
չում: Մոռացել է, որ վաղուց Օկսանան միւս աշխար-  
հումն է: Ա՛հ-հա:

Մօտրեան յօրանջեց, մի աղօթք ասաց, և շուտով  
սենեակում դարձեալ լռութիւն տիրեց, որը խանգարում  
էր միայն անտառի խշշոցով, ու մէկ էլ ծերունու ան-  
հանգիստ փնթփնթոցով:

— Անտառը խշշում է, խշշում...: Օկսանա, հոգի  
ջան...:

Շուտով մեծ անձրև սկսուեց և հեղեղի ձայնով ծած-  
կուեց և քամու աղմուկը, և սոճենու անտառի տնքոցը: